

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

ԵՎ

ԱՎԱՏՐԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

ԿԻՐԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ավստրիայի դաշնային Կառավարությունը (այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Պայմանավորվող կողմ, Կողմ կամ միասին՝ Պայմանավորվող կողմեր), համաձայն «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Հետընդունման համաձայնագիր) 20-րդ հոդվածի, համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Իրավասու մարմինները

1) Ավստրիական կողմից Հետընդունման համաձայնագրի իրականացման համար իրավասու մարմիններն են՝

ա. Հետընդունման դիմումների փոխանցման մասով՝

Ներքին գործերի դաշնային նախարարությունը,

Ներգաղթի և ապաստանի հարցերով դաշնային գրասենյակը

բ. Ավստրիայի, ինչպես նաև երրորդ երկրների քաղաքացիների համար հետընդունման դիմումների ստացման մասով՝

Ներքին գործերի դաշնային նախարարությունը

գ. Ավստրիայում հետընդունման (Հետընդունման համաձայնագրի 5-րդ և 6-րդ հոդվածներ) և տարանցման գործողությունների (Հետընդունման համաձայնագրի 14-րդ և 15-րդ հոդվածներ) իրականացման մասով՝

Ներքին գործերի դաշնային նախարարությունը

2) Հայկական կողմից Հետընդունման համաձայնագրի կիրարկման համար իրավասու մարմիններն են՝

ա. Հետընդունման դիմումների փոխանցման մասով՝

ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը

բ. Հայաստանի, ինչպես նաև երրորդ երկրների քաղաքացիների համար հետընդունման դիմումների ստացման մասով՝

ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը

գ. Հայաստանում հետընդունման (Հետընդունման համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներ), ինչպես նաև տարանցման գործողությունների (Հետընդունման համաձայնագրի 14-րդ և 15-րդ հոդվածներ) իրականացման մասով՝

ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը

Հողված 2

Հետընդունման դիմումի բովանդակությունը, փոխանցումը և պատասխանը

- 1) Հետընդունման դիմումների անհրաժեշտ բովանդակությունը որոշվում է Հետընդունման համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն:
- 2) Հետընդունման դիմումի համար կիրառելի ընդհանուր ձևը ներկայացված է Հետընդունման համաձայնագրին կից՝ որպես 5-րդ հավելված:
- 3) Հետընդունման դիմումները, դրանց ստացման հաստատումը, դրանց պատասխանները և այլ հարակից հաղորդագրությունները ներկայացվում են Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի (այսուհետև՝ ՌՀԿԷՀ) կամ, անհրաժեշտության դեպքում, հաղորդակցման այլ անվտանգ միջոցներով՝ ներառյալ էլեկտրոնային միջոցները, որոնցից է, օրինակ, էլեկտրոնային փոստը: Դիմումի էլեկտրոնային փոխանցման դեպքում փոխանցման հաշվետվությունը համարվում է հետընդունման դիմումի ստացման հաստատում: Հայկական կողմին այլ բան ծանուցած չլինելու դեպքում Ավստրիան հետընդունման կամ տարանցման համար մուտքային դիմումները կստանա միայն էլեկտրոնային փոստով:
- 4) Հետընդունման դիմումներ ներկայացնելիս և դրանց պատասխանելիս պետք է պահպանվեն Հետընդունման համաձայնագրի 11-րդ հոդվածում նշված ժամկետները:
- 5) Եթե անձը արգելանքի է վերցվում Հայցող պետության սահմանային շրջանում (ներառյալ օդանավակայանները) սահմանը անօրինական հատելուց հետո, ժամանելով անմիջականորեն Հայցվող պետության

տարածքից, ապա հայցող Կողմը հետընդունման դիմումը կարող է ներկայացնել տվյալ անձին արգելանքի վերցնելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում (համաձայն Հետընդունման համաձայնագրի 7-րդ հոդվածի 3-րդ կետի):

Հոդված 3

Հարցազրույցների անցկացման կարգը

1) Եթե հնարավոր չէ ներկայացնել Հետընդունման համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներով սահմանված՝ անձը հաստատող փաստաթղթերը, Հայցվող Կողմի իրավասու դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունն անցկացնում է հարցազրույց, համաձայն Հետընդունման համաձայնագրի 9-րդ հոդվածի 3-րդ կետի, հնարավորինս շուտ դա համաձայնեցնելով հայցող մարմնի հետ:

2) Հարցազրույցն անցկացնելու պարտականությունը դրվում է՝

- Ավստրիայի Հանրապետության իշխանությունների կողմից դիմումի դեպքում՝

Վիեննայում Հայաստանի Հանրապետության դեսպանության վրա

- Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից դիմումի դեպքում՝

Թբիլիսիում Ավստրիայի Հանրապետության դեսպանատան վրա.

3) Հարցազրույցը հիմնականում անցկացվում է հնարավորինս շուտ և հայցվող Կողմի իրավասու մարմինների տարածքում, սակայն Կողմերի իրավասու մարմինների միջև համաձայնության դեպքում այն կարող է անցկացվել նաև մեկ այլ հարմար վայրում կամ վիդեո և աուդիո տեխնոլոգիաների միջոցով:

4) Հայցող Կողմի իրավասու մարմնի ներկայացուցիչը կարող է

ներկա լինել հետընդունման ենթակա անձի հարցազրույցին:

5) Հայցվող Կողմի իրավասու մարմինը, առանց անհարկի ուշացման, սակայն ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում, տեղեկացնում է հայցող Կողմի իրավասու մարմնին հարցազրույցի արդյունքի մասին: Տվյալ հետընդունման դիմումի գրավոր պատասխանը, ներառյալ հարցազրույցի արդյունքը, տրվում է հարցազրույցից հետո ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

6) Հետընդունման ենթակա անձի ոչ բավարար նույնականացման պատճառով հետընդունման դիմումի մերժման դեպքում, եթե հիմքեր կան ենթադրելու, որ քաղաքացիությունը որոշելը դեռևս հնարավոր կլինի կատարել լրացուցիչ հարցազրույցի միջոցով, Պայմանավորվող կողմերի իրավասու մարմիններից որևէ մեկի առաջարկով հնարավորինս շուտ անցկացվում է այդպիսի լրացուցիչ հարցազրույց:

Հոդված 4

Պետական սահմանի անցման կետեր

1) Հետընդունումն ու տարանցումը կարող են իրականացվել պետական սահմանի հետևյալ անցման կետերում՝

ա. Ավստրիայի տարածքում՝

Վիեննայի միջազգային օդանավակայան.

Վիեննա-Շվեչատ

Շվեչատի քաղաքային ոստիկանության գլխավոր մասնաշենք.

Սահմանային ոստիկանության տեսչություն:

բ. Հայաստանի տարածքում՝

«Զվարթնոց» միջազգային օդանավակայան.

2) Առանձին դեպքերում անձանց հետընդունման և տարանցման

համար կարող են օգտագործվել նաև միջազգային երկաթուղային, օդային կամ ավտոմոբիլային փոխադրման համար հաստատված պետական սահմանի անցման կետերը:

Հոդված 5

Փոխադրման եղանակները և փոխադրման տեսակը

1) Հայցվող Կողմի իրավասու մարմնի կողմից հետընդունման համար տրված համաձայնությունն ստանալուց հետո կամ Հետընդունման համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո հայցող Կողմի իրավասու մարմինը հայցվող Կողմի իրավասու մարմնին ուղարկում է գրավոր ծանուցում, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

- փոխադրման եղանակ տեսակ (օդային, ծովային կամ ցամաքային),

- մուտքի անցակետ (պետական սահմանի անցման կետ),

- փոխադրման ամսաթիվ,

- փոխադրման ժամանակ,

- արդյոք փոխադրումն իրականացվելու է ուղեկցող անձնակազմով:

2) Ծանուցումը կատարվում է սույն Կիրարկող արձանագրության հավելվածում կցված փոխադրման ձևը 1-ին հոդվածում նշված հայցվող Կողմի իրավասու մարմնին ուղարկելով: Այդպիսի ծանուցումն ուղարկվում է ՌՀԿԷՀ-ի միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, հաղորդակցման այլ անվտանգ միջոցներով, ներառյալ էլեկտրոնային միջոցները, որոնցից է, օրինակ, էլեկտրոնային փոստը, ոչ ուշ, քան հետընդունման ենթակա անձի փոխադրման ամսաթվից 3 (երեք) աշխատանքային օր առաջ:

3) Եթե փոխադրման օրը պետք է հետաձգվի հայցող Կողմի իրավասու

մարմնի կողմից ֆորմալ կամ գործնական խոչընդոտների պատճառով, հայցվող Կողմի իրավասու մարմինն այդ մասին անհապաղ տեղեկացվում է: Փոխադրման ժամկետը հետաձգելու դեպքում հայցող Կողմի իրավասու մարմինն այդ մասին կրկին ծանուցում է՝ համաձայն 1-ին կետի:

4) Եթե փոխադրման օրը պետք է հետաձգվի հայցվող Կողմի իրավասու մարմնի կողմից ֆորմալ կամ գործնական խոչընդոտների պատճառով, հայցող Կողմի իրավասու մարմինն այդ մասին անհապաղ տեղեկացվում է, և կարող է նշանակվել փոխադրման նոր ամսաթիվ:

Հոդված 6

Տարանցման մասով պահանջը

1) Տարանցման դիմումը հայցող Կողմից հայցվող Կողմի իրավասու մարմինն է ներկայացվում համաձայն Հետընդունման համաձայնագրին որպես 6-րդ հավելված կցված ձևի, ՌՀԿԷՀ-ի կամ, անհրաժեշտության դեպքում, հաղորդակցման այլ անվտանգ միջոցներով, ներառյալ էլեկտրոնային միջոցները, որոնցից է, օրինակ, էլեկտրոնային փոստը, նախատեսվող տարանցումից առնվազն 10 (տասը) օր առաջ:

2) Հայցվող Կողմի իրավասու մարմինը պատասխանում է տարանցման դիմումին ՌՀԿԷՀ-ի միջոցով կամ, անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով, որոնցից է, օրինակ, էլեկտրոնային փոստը:

3) Ի լրումն Հետընդունման համաձայնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նվազագույն բովանդակության՝ տարանցման վերաբերյալ գրավոր դիմումն անհրաժեշտության դեպքում պետք է պարունակի նաև հետևյալ տեղեկությունները.

- տեղափոխման ենթակա անձի հիվանդությամբ կամ տարիքով

պայմանավորված՝ օգնության, խնամքի կամ աջակցության հատուկ կարիքի վերաբերյալ տեղեկություններ,

- հատուկ պաշտպանության կամ անվտանգության միջոցառումների հնարավոր անհրաժեշտության վերաբերյալ տեղեկություններ:

4) նախատեսվում է 3-րդ կետում նշված լրացուցիչ տեղեկությունները տրամադրել տարանցման դիմումների համար օգտագործվելիք ընդհանուր ձևի (Հետընդունման համաձայնագրի 6-րդ հավելված) «Գ» կետի շրջանակներում («Նկատարումներ»):

5) Հայցող Կողմը նախատեսվող տարանցումից առնվազն 1 (մեկ) օր առաջ ՌՀԿԷՀ-ի կամ, անհրաժեշտության դեպքում, հաղորդակցման այլ անվտանգ միջոցներով, ներառյալ էլեկտրոնային միջոցները, որոնցից է, օրինակ, էլեկտրոնային փոստը, գրավոր ծանուցում է հայցվող Կողմի իրավասու մարմինն փոխանցման ժամանակի և/կամ նախատեսված մուտքի անցակետի հետ կապված ցանկացած փոփոխության մասին: Հայցվող Կողմը վերահաստատում է տարանցման փոփոխված ժամանակը և/կամ փոփոխված մուտքի անցակետը:

Հոդված 7

Ուղեկցությամբ հետընդունման կամ տարանցման եղանակները

1) Եթե հետընդունումը կամ տարանցումը կատարվում է հայցող Կողմի իրավասու մարմնի անձնակազմի ուղեկցությամբ (այսուհետ՝ ուղեկցող անձնակազմ), հայցող Կողմի իրավասու մարմինը ուղեկցող անձնակազմի վերաբերյալ տրամադրում է հետևյալ տեղեկությունները՝

ուղեկցող անձնակազմի անդամների անունը, ազգանունը, կոչումը, եթե այդպիսին կա, նրանց անձնագրերի տեսակը, համարը, տրման ամսաթիվը և վավերականության ժամկետը, չվերթի համարը, ժամանման և մեկնման

ամսաթիվը և ժամը:

2) Ուղեկցությամբ հետընդունման կամ տարանցման ընթացքում պետք է միշտ հնարավոր լինի նույնականացնել ուղեկցող անձնակազմի անդամներին, ինչպես նաև հաստատել հետընդունման կամ տարանցման հետ կապված՝ նրանց տրամադրված թույլտվությունը և նրանց առաջադրանքի բնույթը:

3) Ուղեկցող անձնակազմի լիազորությունները սահմանափակվում են ինքնապաշտպանության և շտապօգնության ապահովմամբ: Եթե հետընդունումը կամ տարանցումը կատարվում է ոստիկանության ուղեկցությամբ, ուղեկցող անձնակազմը հետընդունումը կամ տարանցումն իրականացնում է առանց զենքի և քաղաքացիական հագուստով: Ուղեկցող անձնակազմը չի կարող որևէ ինքնուրույն գործողություն կատարել հայցող Կողմի տարածքից դուրս:

4) Ուղեկցող անձնակազմը պետք է գործի հայցվող Կողմի իրավական կարգավորումներին համապատասխան:

5) Փոխադարձ համաձայնությամբ հայցվող Կողմի իրավասու մարմինները հայցվող Կողմի տարածքում աջակցություն են ցուցաբերում հետընդունման կամ տարանցման գործողություններին՝ մասնավորապես վերահսկելով տվյալ անձին և այդ նպատակով ապահովելով համապատասխան հարմարություններ:

Հոդված 8

Ծախսերը

1) Այն դեպքում, երբ Պայմանավորվող կողմերից որևէ մեկը կրել է ծախսեր, որոնք վերջինս պարտավոր չէր կրել Հետընդունման համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն, այդ ծախսերը փոխհատուցում է

այն Պայմանավորվող կողմը, որը պարտավոր էր կրել այդ ծախսերը, հաշիվապարանքագիրն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում՝ եվրոյով բանկային փոխանցում կատարելով:

2) Եթե ծախսերը առաջացել Հետընդունման համաձայնագրի 13-րդ հոդվածով նշված՝ սխալմամբ իրականացված հետընդունման դեպքում, հայցվող Կողմը հայցող Կողմին ներկայացնում է գրավոր համապարփակ հիմնավորում այն մասին, թե ինչու չեն պահպանվել Հետընդունման համաձայնագրի 3-6-րդ հոդվածներով սահմանված պայմանները, ինչպես նաև վերադարձման ենթակա անձի ինքնության, քաղաքացիության կամ տարանցման երթուղու վերաբերյալ առկա ամբողջ տեղեկությունները:

Հոդված 9

Կոնտակտային տվյալները

Պայմանավորվող կողմերի իրավասու մարմիններն անհապաղ գրավոր ծանուցում են միմյանց սույն Արձանագրության 1-ին, 3-րդ և 4-րդ հոդվածներում նշված իրավասու մարմինների, դեսպանատների և պետական սահմանի անցման կետերի կոնտակտային տվյալների (հասցե, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ) և դրանց ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 10

Խորհրդակցությունները

1) Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները համագործակցում են Հետընդունման համաձայնագրի և սույն Արձանագրության իրականացման, ինչպես նաև հարակից հարցերի շուրջ:

2) Պայմանավորվող կողմերի իրավասու մարմիններից որևէ մեկի

պահանջով 3 (երեք) ամսվա ընթացքում իրավասու մարմինների մակարդակով խորհրդակցություններ են անցկացվում սույն Արձանագրության կիրարկման և կիրառման վերաբերյալ: Հանդիպման վայրը որոշվում է համատեղ: Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների համաձայնությամբ խորհրդակցությունները կարող են անցկացվել վիդեո և աուդիո տեխնոլոգիաների կիրառմամբ:

3) Եթե համաձայնություն ձեռք չի բերվել, լուծումներ գտնելու ջանքերը կձեռնարկվեն դիվանագիտական ուղիներով:

Հոդված 11

Լեզուն

1) Անգլերենը համաձայնեցված է որպես սույն Արձանագրության և Հետընդունման համաձայնագրի կիրարկման մասով հաղորդակցության ընդհանուր լեզու:

2) Կողմերը միմյանց անգլերենով տրամադրում են այն բոլոր փաստաթղթերն ու գրառումները, որոնք իրավասու մարմիններից պահանջվում է միմյանց փոխանցել Հետընդունման համաձայնագրի և սույն Արձանագրության կիրարկման շրջանակներում, ինչպես, օրինակ, Հետընդունման համաձայնագրին կցված ձևերը:

Հոդված 12

Եզրափակիչ դրույթներ

1) Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց տեղեկացնում են սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին: Պայմանավորվող կողմը վերջին ծանուցումն ստանալուց հետո այդ մասին

ծանուցում է Հետընդունման հարցերով համատեղ կոմիտեին՝ համաձայն Հետընդունման համաձայնագրի 20-րդ հոդվածի 2-րդ կետի: Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի ստանալու օրվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

2) Սույն Արձանագրությունը կնքվում է անժամկետ:

3) Հետընդունման համաձայնագրի գործողության դադարելու դեպքում միաժամանակ դադարում է նաև սույն Արձանագրության գործողությունը:

4) Հետընդունման համաձայնագրի կամ դրա մի մասի ժամանակավոր կասեցման դեպքում միաժամանակ ժամանակավորապես կասեցված է համարվում նաև սույն Արձանագրության կատարումը:

5) Սույն Արձանագրության գործողությունը կարող է ցանկացած ժամանակ Պայմանավորվող կողմերից որևէ մեկի կողմից՝ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցմամբ: Գործողության դադարեցման ուժի մեջ մտնելու համար սահմանվում է երեք ամիս ժամկետ՝ սկսած դադարեցման մասին ծանուցումն ստանալու օրվանից:

6) Սույն Արձանագրության մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել դիվանագիտական ուղիներով՝ Կողմերի գրավոր համաձայնությամբ: Ցանկացած փոփոխություն կամ լրացում ուժի մեջ է մտնում այն պայմաններով, որոնք նախատեսված են սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար:


ԿԱՏԱՐՎԱԾ Է Վրեճեա -ում 18.07.2023-ին, երկու
բնօրինակով, յուրաքանչյուրը՝ անգլերեն, գերմաներեն և հայերեն, ընդ որում՝
բոլոր տեքստերը հավասարազոր են:

Տարածայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝



Ավստրիայի դաշնային
Կառավարության կողմից՝



ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավստրիայի դաշնային Կառավարության միջև և Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրության 5-րդ հոդվածին համապատասխան:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Ամբողջական անունը (ազգանունը ընդգծել)
.....
2. Ծննդյան ամսաթիվը
.....
3. Փոխադրման տեսակը (օղով կամ ցամաքով)
.....
4. Ամսաթիվը
.....
5. Ժամը
.....
6. Փոխադրման վայրը (պետական սահմանի անցման կետը)
.....
7. Առողջական վիճակը
.....
8. Ուղեկցությամբ իրականացվող փոխադրում՝ այո ոչ

9. Նշանակման վայրում ձեռնարկվելիք անվտանգության միջոցները

.....

.....

(Հայցող մարմնի ստորագրությունը) (կնիք/դրոշմակնիք)

PROTOCOL
BETWEEN
THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
AND
THE AUSTRIAN FEDERAL GOVERNMENT
ON THE IMPLEMENTATION OF THE
AGREEMENT BETWEEN THE EUROPEAN UNION AND THE REPUBLIC OF ARMENIA
ON THE READMISSION OF PERSONS RESIDING WITHOUT AUTHORISATION

The Government of the Republic of Armenia and the Austrian Federal Government (hereinafter each referred to as "the Contracting Party", "the Party" or together as "the Contracting Parties") have agreed on the following pursuant to Article 20 of the Agreement between the European Union and the Republic of Armenia on the readmission of persons residing without authorization (hereinafter "Readmission Agreement"):

Article 1

Competent Authorities

(1) The competent authorities for the implementation of the Readmission Agreement on the Austrian side are:

a. For the transmission of readmission applications:

Federal Ministry of the Interior

Federal Office for Immigration and Asylum Directorate

b. For the receipt of readmission applications for Austrian nationals as well as for third-country nationals and stateless persons:

Federal Ministry of the Interior

c. For the implementation of readmissions in Austria (Articles 5 and 6 of the Readmission Agreement) and of transit operations (Articles 14 and 15 of the Readmission Agreement):

Federal Ministry of the Interior

(2) The competent authorities for the implementation of the Readmission Agreement on the Armenian side are:

a. For the transmission of readmission applications:

Migration and Citizenship Service

Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

b. For the receipt of readmission applications for Armenian nationals as well as for third-country nationals and stateless persons:

Migration and Citizenship Service

Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

c. For the implementation of readmissions in Armenia (Articles 3 and 4 of the Readmission Agreement) as well as transit operations (Articles 14 and 15 of the Readmission Agreement):

Migration and Citizenship Service

Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

Article 2

Content, transmission and reply to the readmission application

(1) The necessary content of readmission applications shall be determined in accordance with Article 8 of the Readmission Agreement.

(2) A common form to be used for readmission applications is attached as Annex 5 to the Readmission Agreement.

(3) Readmission applications, the confirmation of their receipt, answers thereto and all other related messages shall be submitted via the Readmission Case Management Electronic System (hereinafter referred to as the "RCMES") or, if necessary, by other secure communication channels, including electronic communication such as e-mail. In the case of

an electronic transmission of the application, the transmission report shall be deemed to constitute confirmation of receipt of the readmission application. Until otherwise notified to the Armenian Party, Austria shall receive incoming applications for readmission or transit only via e-mail.

(4) When submitting readmission applications and replying to them, the time limits of Article 11 of the Readmission Agreement must be observed.

(5) If a person has been apprehended within the border region (including airports) of the requesting Party after illegally crossing the border, coming directly from the territory of the requested Party, the requesting Party may submit a readmission application within two (2) working days of the apprehension (in accordance with Article 7 (3) of the Readmission Agreement).

Article 3

Procedure for conducting interviews

(1) If no identification documents pursuant to Annexes 1 and 2 of the Readmission Agreement can be presented, the competent diplomatic or consular representation of the requested Party shall conduct the interview pursuant to Article 9 (3) of the Readmission Agreement in coordination with the requesting Authority at the earliest possible time.

(2) The conducting of the interview is incumbent on:

- Upon request by the authorities of the Republic of Austria:

Embassy of the Republic of Armenia in Vienna

- Upon request by the authorities of the Republic of Armenia:

Embassy of the Republic of Austria in Tbilisi

(3) The interview shall, in principle, take place as soon as possible and on the premises of the competent authorities of the requested Party, but may also take place in another suitable place or by means of video and audio technology upon consultation between the competent authorities of the Contracting Parties.

(4) A representative of the competent authority of the requesting Party may be present during the interview of the person to be readmitted.

(5) The competent authority of the requested Party shall inform the competent authority of the requesting Party about the result of the interview without undue delay after the interview, but no later than the next working day. A written reply to the readmission application in question, including the result of the interview, shall be given no later than within three (3) working days after the interview.

(6) In case of a rejection of the readmission application due to insufficient identification of the person to be readmitted there is reason to assume that the determination of nationality can be effectuated by an additional interview, such an additional interview shall be carried out as soon as possible, upon the proposal of one of the competent authorities of the Contracting Parties.

Article 4

State border crossing points

(1) Readmission and transit may take place at the following state border crossing points:

a. on Austrian territory:

Vienna International Airport

Vienna-Schwechat

City Police Headquarters Schwechat

Border Police Inspectorate

b. on Armenian territory:

Zvartnots International Airport

(2) In individual cases, state border crossing points approved for international rail, air or road transport may also be used for the readmission and transit of persons.

Article 5

Transfer modalities and mode of transportation

(1) Upon consent of the competent authority of the requested Party to the readmission, or after the expiry of the time limit set out in Article 11 (2) of the Readmission Agreement, a written communication shall be sent by the competent authority of the requesting Party to the competent authority of the requested Party containing the following information:

- Mode of transfer (air, sea or land);
- Place of entry (state border crossing point);
- Date of transfer;
- Time of the transfer;
- Whether the transfer takes place with escort personnel.

(2) The communication shall be made by sending the transfer form attached as Annex to this Protocol to the competent authority of the requested Party referred to in Article 1. Such communication shall be made via the RCMES, or, if necessary, by other means of secure communication channels, including electronic means such as e-mail, no later than three (3) working days prior to the date of transfer of a person to be readmitted.

(3) If the date of transfer has to be postponed by the competent authority of the requesting Party due to formal or practical obstacles, the competent authority of the requested Party shall be informed immediately. In the event of postponement of the transfer date, the competent authority of the requesting Party shall make another communication in accordance with paragraph 1.

(4) If the date of the transfer has to be postponed by the competent authority of the requested Party due to formal or practical obstacles, the competent authority of the requesting Party shall be informed immediately and a new date for the transfer may be arranged.

Article 6

Transit request

(1) The transit application shall be submitted from the requesting Party to the competent authority of the requested Party via the RCMES, or, if necessary, by other means of secure

communication channels, including electronic means such as e-mail at least ten (10) days before the envisaged transit and in accordance with the form attached as Annex 6 to the Readmission Agreement.

(2) The competent authority of the requested Party shall answer to the transit request via the RCMES, or, if necessary, by other means of electronic communication such as e-mail.

(3) In addition to the minimum content set forth in Article 15 (1) of the Readmission Agreement, the written application for transit shall, if necessary, also contain the following information:

- Information on any special need for assistance, care or support due to illness or age of the person to be transported;
- Information about the possible requirement for special protection or security measures.

(4) The additional information referred to in paragraph 3 shall be provided under item C ("*Remarks*") of the common form to be used for transit applications (Annex 6 to the Readmission Agreement).

(5) The requesting Party shall notify the competent authority of the requested Party via the RCMES, or, if necessary, by other means of secure communication channels, including electronic communication such as e-mail, at least one (1) day prior to the planned transit, of any changes with respect to the time of transfer and/or the intended point of entry in writing. The requested Party shall reconfirm the changed time of transfer and/or the changed place of entry.

Article 7

Modalities of escorted readmission or transit

(1) If the return or transit is carried out under escort by personnel of the competent authority of the requesting Party (hereinafter: escorting personnel), the competent authority of the requesting Party shall provide the following information regarding the escorting personnel: First and last name; rank of the escorting personnel, if applicable; type, number, date of issuance and period of validity of their passports; flight number; date and time of arrival and departure.

(2) Escorting personnel must be able to identify themselves at all times during escorted readmission or transit, as well as to prove their authorization and the nature of their task connected to the readmission or transit.

(3) The authorities of the escorting personnel shall be limited to self-defence and emergency assistance. If the readmission or transit is carried out under police escort, the escorting personnel shall carry out the readmission or transit unarmed and in civilian clothing. The escorting personnel may not undertake any sovereign acts outside the territory of the requesting Party.

(4) The escorting personnel shall comply with the legal framework of the requested Party.

(5) Upon mutual consent, the competent authorities of the requested Party shall assist in the readmission or transit operations within the territory of the requested Party, in particular by surveilling the person concerned and by providing appropriate facilities for that purpose.

Article 8

Costs

(1) In case a Contracting Party has incurred costs that it is not obliged to bear pursuant to Article 16 of the Readmission Agreement, these costs shall be reimbursed by the Contracting Party obliged to bear the costs within 30 days of receipt of the invoice by bank transfer in Euro.

(2) If any costs have incurred in case of readmission in error pursuant to Article 13 of the Readmission Agreement, the requested Party shall provide the requesting Party with a comprehensive written justification as to why the conditions laid down in Articles 3 to 6 of the Readmission Agreement are not met, together with all available information on the actual identity, nationality or transit route of the person to be returned.

Article 9

Contact details

The competent authorities of the Contracting Parties shall notify each other immediately in writing of the contact details (address, telephone, fax, e-mail) of the competent authorities, embassies and state crossing points referred to in Articles 1, 3 and 4 of this Protocol and of any changes thereof.

Article 10

Consultations

(1) The competent authorities of the Contracting Parties shall cooperate in the implementation of the Readmission Agreement and this Protocol as well as in related matters.

(2) At the request of any of the competent authorities of the Contracting Parties, consultations on the implementation and application of this Protocol shall be held at the competent level within three (3) months. The venue for the meeting shall be determined jointly. In coordination between the competent authorities of the Contracting Parties, consultations may be conducted using video and audio technology.

(3) If no understanding can be reached, attempts for a solution shall be initiated through diplomatic channels.

Article 11

Language

(1) English is agreed as the common language for communication in the implementation of this Protocol and the Readmission Agreement.

(2) The Parties shall provide each other with all documents and records the competent authorities are required to transmit to each other in the framework of the implementation of the Readmission Agreement and this Protocol, such as the forms annexed to the Readmission Agreement, in the English language.

Article 12

Final provisions

(1) The Contracting Parties shall inform each other through diplomatic channels on the completion of their national procedures, necessary for the entry into force of this Protocol. The Contracting Party, following the receipt of the last notification, shall notify the Joint Readmission Committee accordingly, in accordance with Article 20 (2) of the Readmission Agreement. This Protocol shall enter into force on the first day of the second month following the date of such notification to the Joint Readmission Committee.

(2) This Protocol is concluded for an indefinite period of time.

(3) In case of termination of the Readmission Agreement, this Protocol shall cease to be in force at the same time.

(4) In case of temporary suspension of the Readmission Agreement or a part thereof, the implementation of this Protocol shall be deemed to be temporarily suspended at the same time.

(5) This Protocol may be terminated at any time by either Contracting Party in writing through diplomatic channels. The period of notice shall be three months from the date of receipt of the notice of termination.

(6) Amendments and additions to the present Protocol may be made by mutual agreement between the Parties in writing through diplomatic channels. Any amendments or additions shall enter into force under the same conditions as foreseen for the entry into force of this Protocol.

DONE at Vienna on 18.07.2023, in two originals, each in the English, German, and Armenian languages, all three texts being equally authentic. In case of divergence, the English text shall prevail.

For the Government of the Republic of Armenia	For the Austrian Federal Government
--	--

M. Spangol

Michael Huber



Annex

TRANSFER INFORMATION

Pursuant to Article 5 of the Protocol between the Austrian Federal Government and the Government of the Republic of Armenia on the Implementation of the Agreement between the European Union and the Republic of Armenia on the readmission of persons residing without authorisation.

PERSONAL DETAILS AND DETAILS OF TRANSFER

1. Full name (underline surname):

.....

2. Date of birth:

.....

3. Type of transfer (by air or land):

.....

4. Date:

.....

5. Time:

.....

6. Place of transfer (state border crossing point):

.....

7. State of health:

.....

8. Escorted transfer: yes no


9. Security measures to be taken at place of destination:

.....

.....
(Signature of the requesting authority) (seal/stamp)

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023 թվականի հուլիսի 18-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ավստրիայի Դաշնային Կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ**



S. Stepanyan
Նելլի Ստեփանյան